

Ի Մ Ա Հ Ն

ԱՐՏԱԻԱԶԴԱՅ ԱՌԱԶՆՈՅ

ԲԱՆԱՍՏԵՂԾ ԹԱԳԱԻՈՐԻ

En erit, ut liceat totum mihi ferre per orbem,
Sola Sophocleo tua carmina digna coturno?

VIRGIL. Bucol. Eglog. VIII. (*).

Ա.

Բա՛նտ մահաստուեր, բացուէ՛ հոգւոյս իմ առջեւ . . .
Ես պատերէն քո չեմ սարսիր Թանձր ու սեւ,
Ես խորշերէն քո չեմ խորշիւր գէճ խաւար,
Ես չեմ փախչիր շրջԹաներէդ ժանգափար . —
Բա՛նտ մահաստուեր, բացուէ՛ հոգւոյս իմ առջեւ :

Աղբքսանդրու ոչ զիս վաճառք ոսկեգանձ,
Ոչ արքունիք զիս հրապուրեն Պրտղոմեանց .
Այլ գամ տըխուր իհայրենեաց իմ պանդուխտ,
Գամ ես գերի Թագաւորիս ոտն իյուխտ . —
Բա՛նտ մահաստուեր, բացուէ՛ հոգւոյս իմ առջեւ :

Հո՛ն ուր արքայն իմ կայ Թըշուա՛ն Արտաւազ՝
Քաղցր է դիմել ինձ տարփանօ՛ք սըրտավազ,
Քս զիմ մոռնամ պանդխտութիւն եւ ցաւեր՝
Երբ զիմ պանդուխտ տեսնեմ արքայն յիւր վըշտեր . —
Բա՛նտ մահաստուեր, բացուէ՛ հոգւոյս իմ առջեւ :

Բ.

Գիշեր է, եւ այն օթեւան ցաւոց
Կըրկին խաւարի մէջ երերակոծ,
Ոչ մէկ գըծալիւր աստեղ դող իդող
Կամ լուսնին անոյշ սըպըրդի հոն շող :

(*) Իցիւ, լինէր ինձ տարփողել յաշխարհ համայն
Ըզմոփոկեան սօյրեց արժան տաղս քո միայն :

Աղեքսանդրիոյ վառ իվառ ջահեր
Կարծես յօր փոխել ջանան ըզգիշեր,
Եւ ուրախալից գոչին ամբոխին՝
Բանտին պատերուն զերդ հովեր բախին:

Լո՛ւռ էր բանտըն լո՛ւռ իբր ըզգերեզման . . .
Բայց երբ Թընդաց օդ խուժանին իծայն,
«Կեցցէ՛ Անտոնիոս, կեցցէ Թագուհին,
«Մեռցի՛ Արտաւազդ Հրոմայ գերին» (*):

Այն ժամուն բանտին նըսեմ կամարանք
Մի խուլ հեծուծեան տըւին արծազանգ .
«Հրոմայ գերի՛ն» . . . վա՛յ զարկաւ Ֆակտին,
Եւ շառաչեցին շրջալայք իւր կըրկին:

Պահ մը մըտայոյզ գլուխն իկոծեղ յեց,
«Այո՛ Արտաւազդ, գերի՛ ես, գոչեց .
Գերի՛ ես, վրկա՛յ քեզ ահա շրջալատ,
Գերի՛ ես, վրկա՛յ քո անթագ Ֆակատ:

Գերի՛ . . . ե՛ս գերի՛, որդի՛ս Տիգրանայ՝
Որ իւր պատուանդան ունէր զԱսիայ,
Գերի՛, ե՛ս Հայոց մեծաց Թագաւոր
Որ դողացուցին Թագաւորս բոլոր:

Հրոմայ գերի՛, ես որ քաջապէս
Նոցա դէմ փառաց իջայ ասպարէս,
Եւ Արծիւներովս իմով մարտագոռ
Գերեցի Նորա Արծիւս ահաւոր . . .

Բայց ահա յաղթողս եւ ե՛ս գերեցայ . . .
Այլ հայր իմ Տիգրան, քո արեւ վրկայ,
Որ զայս շրջալաներ չետ ինձ վատուծին,
Այլ հռոմէական դաւաճանութիւն»: —

Գոչեց, եւ աչքերն իկրակ բոցավառ
Ջերցուց շրջալաներն առ երկի՛նս արդար,
Եւ մըռնչելով զերդ ա՛մպ երկրասաստ՝
Գողացո՛յց ըզբանտն պոխւծն Արտաւազդ:

Գ.

Առի՛ւծդ հրզօր, քա՛ջ լեր, Թէպէտ իբանտիս՝
Բայց դու մեծ ես քան Թըշնամիդ յարքունիս .
Թէպէտ կապուած եմ ձեռքդ՝ Հայոց սանձակալ,
Բայց քան զկապողն այն ձեռք՝ հրզօր եմ դարձեալ:

(*) Անտոնիոս, որ Հռոմայեցւոց եռապետաց մէկն էր, չկարենալով իւր տկար գէնքերովը մեր Արտաւազդ Ա քաջ ու իմաստուն բագաւորին յաղթել, աղաքանքներով ու երդմունքներով քովը հրաւիրեց, շղթայի զարկաւ ու տաքաւ զնա յեզիպտոս, մատնելով Կոէոպատրայ բազումնայն՝ որ իւր տարփածուն էր: Այն անօրէն բազումին որ արդէն ռխ ունէր Արտաւազդայ դէմ, հանդիսի օր մը երիտասարդ Արշակունւոյն գլուխը կտրել տուաւ:

Մերկ է ճակատդ , անփառունակ սակայն չէ .
Արքայական փառքդ իյաչաց բոց ցայտէ ,
Եւ Թէպէտ աջդ իմականէն է Թափուր ,
Այլ ոչ եթէ եւ յիւր ուժոյն ամրակուռ :

Ո՛վ Տիգրանայ մեծ արժանի գո՛ւ ծընունդ ,
Թէ նա զբոլո՛ր երկիր կոխեց հանեց Թունդ ,
Դու օ՛ն բաղդին ե՛լ Արտաւազդ ակոյեան ,
Եւ վերացիր իմահուանէդ յաղթական :

Այո՛ , արքայ մը ոչ միայն իգահու ,
Այլ մե՛ծ է նա մեծ եւ խոնարհն իմահու .
Որչափ ջանայ բաղդ քեզ ընկճել դիմակալ ,
Ո՛վ քաջ , կարես յանմահութիւն բարձրանալ :

Դ.

Արեւն ելեր էր օրսացել պերճափառ ,
Եւ ծաւալէր զըւարթ ցոլքեր վառ իվառ .
Բնութիւն ամէն զըւարճանայր լուսապանձ ,
Կարծես տօնէր ըզյիշատակ գերապանձ
Նահապետին Հայկազանց :

Այն գեղեցիկ օր Թեւերով բոցարծարծ
Ըզփառաւորն այն կըբերէր տարեդարձ ,
Յոր առաջին բըռնաւորին դիմագրաւ՝
Հայկ աշխարհի զազատութեան ձայն տըւալ ,
Եւ մեզ՝ զանուն իւր անբաւ :

Այն սըխրալի օր անմոռա՛ցն յաւիտեան ,
Յարձանագիրս անդ բոցատառս աստեղեան ,
Երկի՛ն , առ քեզ ես բողոքեմ ցաւալից ,
Պէ՛տք էր այն օր դառնալ խուզ լալօնից
Հայկայ որդւոցըս սըրտից :

Պէ՛տք էր այն օր , յազատութեան օր վըսեմ ,
Հայկայ յաջորդն իբր ըզգերի ոք նըսեմ՝
Շրղթայակաւ յօտար երկիր դաւաճան
Ջոհ լինի զոհ կընո՛ջ միոյ յխուութեան ,
Եւ Հռովմական մատնութեան . . .

Նըստած էր կինն այն հոմանւոյն հետ իգահ ,
Եւ շուրջ՝ որդիք եւ գունդ զօրացն անձնապահ ,
Եւ բազմութիւն իթագուհւոյն մեծ հրաւէր
Յարբունական դահլիճ վազել էր խըռներ ,
Տեսնել ըզմահ քաջին մեր :

Այն Թագուհին՝ կընոջ յանո՛ւշ կերպարան ,
 Օծի մը սիրտ Թագուցանէր ժանտական .

Ոչ, նա չունէր կընոջ ըզսիրտ քաղցուենի ,
 Այն՝ որ բաշխէ կեանք եւ շընորհս աշխարհի ,

Սա՛ մա՛հ միայն հլնարի :

Ի՛նք միայն ինք անգուժ աչօք անըստուեր
 Մաղկահասակ զայն Թագաւոր կըդիտէր ,
 Մինչ ամբոխին սիրտ յայն ողորմ տեսարան
 Գորովելով աչքեր լըցուած ծրփական ,

Հայ պարմանւոյն աւա՛ղ տան :

Բայց եւ քաջին սիրտ երեւէր ալէկոծ . . .
 Արդեօք մահուա՞ն է այն երկիւղ ոգէկոծ .
 Է՛հ , ոչ . զի բիւր անգամ նա դէմ յանդիման
 Տեսեալ էր մահն եւ ընկըրկեալ յաղթական

Հըզօր բազկան հայկական :

Ոչ, մահուն ոչ տեսին ըզքաջ դըղըրդէր ,
 Այլ հեռաւոր իւր սիրելեացըն պատկեր .
 Գիրգ ամուսի՛ն մը զոր Թողուր նա այրի ,
 Դո՛ւստըր մի որբ . . . զուրկ իԹագէն մէկ որդի ,

Եւ Հայրենիք մը գերի : . . .

Ո՛վ Հայրենիք , դու արքայի՛ց ալ սըրտին
 Թագէն ալ քաղցր ես դու իժամն այն յետին .
 Ոչ ցուպն , ոչ գահ ողբայր իմահն Արտաշէզ ,
 Այլ զի չկարէր տեսնալ ըզծուխ բարձրադէզ

Իխեղճ քո շէնս եւ յերէզ :

Եւ Արտաւազդ- ոչ լայր ծաղիկ իւր ըզտիք ,
 Ոչ կարճն իւր փառք , այլ ըզքեզ , ո՛վ Հայրենիք .
 Եւ արտասուք մըԹագնէին խիտ առ խիտ
 Այն սեւ աչքեր որ փակէին անժըմիտ

Կարօտ վերջին ողջունիտ :

Բայց Թագուհին եւ իւր անարգ տարփածուն՝
 Իբր ըզգազան որ խաղայ հետ իւր որսուն ,
 Երբ ձաղանօքն այն բաւական կըշտացան՝
 Սիրտն արիւնռուշտ ծարաւահիւծ էր արեան ,

Մահուան ետուն ըզհրաման :

Ամբոխն յայն ժամ դարձուց աչքերն եւ առ քօղ . . .
 Այն արտասուաց մէջ իբր ըզվարդ յայգուն ցօղ՝
 Ընկաւ խարտէշ գլուխ պարմանւոյն գեղեցիկ ,
 Դեռ մընչելով զիւր ամուսին եւ որդիք ,

Եւ զքեզ ո՛վ քա՛ղցր Հայրենիք . . .

Սակայն արիւն իւր ըզլըրէժ գոչելով
Յայտեց յերես չար այն կընդոն ինըզով .
Սարսափեցաւ նա եւ հոռոմ հոմանին ,
Եւ սլաղ քըրտունք նոցա ճակատ ծածկեցին .

Մահ եդ կընիքն ինոսին :

Անցան օրեր . մոռցըւեցաւ օրն եւ ահ ,
Բայց ոչ եթէ եւ ըզնոսա մոռցաւ մահ .
Նոյն տեղ Հոռոմն ալ իւր արեամբ լըւացաւ ,
Նոյն տեղ եւ կինն այն չար վերջին շունչ տուաւ , —
Մահ վրէժն առաւ հանգչեցաւ : —

Ե.

Ո՛վ Արտաւազդ , քո բա՞ղըն ողբամք Թէ մե՛րքս բուն ,
Որ քեզ նըման քաջ արքայէ եւ իմաստուն
Զըմնաց ուրիշ ժառանգուծիւն ինեւրս մեր
Բայց քո շըղթաներ :

Ո՛վ բանաստեղծ հրգօր , ինչո՞ւ արկածքդ յաւէտ
Շարժեն մեր սիրտ եւ ոչ քերթուածք քո վեհաւէտ ,
Որ զօտարաց ալ վառէին սիրտ եւ զոգի՝
Յաւիւն խանդիդ ջերմոգի :

Ո՛հ , երբ զանմահ մեր դիւցազունս Հայաստանեաց
Հանեալ իծատր ողբերգութեամբք քո սրգազգեաց ,
Նըկարէիր կիրս եւ արկածսն մահացուս ,
Շարժեալ ըզՀայս յարտասուս ,

Ո՛վ ողբերգուդ , ո՛հ , գիտէի՞ր Թէ դու ինքնին
Իմեծագոյն օր մը անցեալ Թատր աշխարհին ,
Տըխուր բաղդիդ կատարածիւ սկտի առնուս
Ջապագայի՛ցս արտասուս :

Ընկա՛լ, ընկալ զոր սըրսկեմբ դառն յիշատակիդ ,
Զըկարելով ցօղել իհող գերեզմանիդ ,
Ո՛վ բանաստեղծ արքայ , քեզ զայս քո ազգդ հանուր
Ընծայէ հարկ սիրատուր :

Գիտեմ որ զայդ ընդունիցի ոգիդ սիրով ,
Բայց եւ ըզտաղս իմ այս տըկար՝ ախորժելո՞վ . . .
Քեզ արժանի տաղս ոգելոյ , ո՛վ բանաստեղծ ,
Հարկ է ունել զոգիդ մեծ :

Բայց եթէ սիրտք բանաստեղծից իբրեւ ըզքեզ
Ըզսիրտ միայն ախորժեն եւ սէր աղեկէզ ,
Սուր քո աչքեր Թափանց իսիրտս արկ , մե՛ծ քերթող ,
Մի՛ յանարուեստ իմ իտող :